**667. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ** *բեմի ճակատի եզրին, վերից վար 1 տող.*

Ր
Ո
Գ
Ի
Ր
Ի
\+

ԳԻՐԻՑՈՐ

Ծանոթ. *Տառերի հերթականությունը չի պահպանվել:*

## 66. ՃԱՄՁՈՐ ԳՅՈՒՂ

**668. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիսային պատին, արտաքուստ 1 տող:*

թվ|ին. :ՌՃԿԶ:-ին (1717):

Ծանոթ. *Բարխուդարյանցն անի շինության թվական :ՌՃԽԵ: (1696):*

*Հրատ. Բարխուդարեանց, 63:*

## 67. ՍՊԻՏԱԿ ԽԱՉ ՎԱՆՔ

*Վանք և Հաղրութ գյուղերի արանքում, բարձրադիր մի հարթության վրա, գտնվում է Սպիտակ խաչ վանքը: Այն ունի մի հասարակ եկեղեցի, որի արևմուտքում կա փոքր և բաց գավիթ: Արևելյան պատին կից՝ թաղածածկ սենյակ-հյուրատուն. ընդարձակ բակում՝ խաչքարեր և տապանաքարեր:*

*Գոյություն ունեցող շենքերը բոլորն էլ* XVII *դարի կառուցումներ են, բայց դրանց պատերի մեջ ագուցված հին տապանաքարերի ու խաչքարերի վրա եղած տապանագրությունները հասնում են մինչև* XIV *դարի առաջին կեսը, նույնը նաև բակում գտնվածների վրա. Նախկինում եկեղեցու մեջ գտնված մասունքների հետ կապված ավանդությունները ավելի հին են:*

**669. ԽԱՉՔԱՐ,** *որմնափակ, դեղաքանդակ, գտնվում է բակի հարավային մասում, ճակտոնի տակի կիսակամար քարի վրա 6 տող.*

| | | |
|---|---|---|
| ԵՍԱՋԱՄԻՈՐԴԻԻՇԽԱՆԱՅԿԱՆԿ | | ԵՍ ԱՋԱՄԻ, ՈՐԴԻ ԻՇԽԱՆԱՑ, ԿԱՆԿ\|- |
| ՆԵՑԻՋԻԽԱՉՍԻ:ԻՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ | ես | ՆԵՑԻ ԶԽԱՉՍ[Ի] Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ\|ՈՑ |
| ՈՅՈՐԴՈՅԻՄՈՅԱՍՈՒԴԱՐԱՅՈՐ | հա | ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԱՍՈՒԴԱՐԱՑ. ՈՐ\|Ք |
| ՔԿԱՐԴԷՔՅԻՇԵՅԷՔԻՍՈՒՐԲՅՂ | սա<br>ն.ո | ԿԱՐԴԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՍՈՒՐԲ Ց(Ա)Ղ\|- |
| ԱՒԹՍՁԵՐԱՂԱՉԵՄ:ԻԹՎ | | ԱՒԹՍ ՁԵՐ ԱՂԱՉԵՄ: Ի ԹՎ\|ԻՍ :ՉՂԵ: |
| ԻՍ:Ձ:Ղ:Ե: | | (1346): |

Ծանոթ. *Խաչքարն ընդգրկող երեք որմերի սրբատաշ քարերը պոկել-տարել են, նույնը և ճակտոնինը: Խաչի հորիզոնական թևերի տակ քանդակված են հրեշտակներ:*

*Ջալալյանցն առաջին տողը կարդացել է* «Արսաի որդի իշխանն», *իսկ Բարխուդարյանցը անձնանունները դրել է փոքրատառով և թվականը՝ :ՉՂԵ: Հուշարձանը անվանել է «Բեմ»:*

*Հրատ. Ջալալեանց, II, 264: Բարխուդարեանց, 67:*

670. ՆՈՒՅՆ ԽԱՉՔԱՐԻ հարավային կողին հետագայում փորվել են բազմաթիվ մանր խաչեր և մի հիշատակագրություն՝ 1 տող.

ԵՍ ՀԱՍԱՆՍ

671. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է նախորդ որմնափակ խաչքարի դիմաց. հարավային երեսին կենցաղային տեսարան և կենաց ծառ. Թերի 2 տող.

ԱՅՍԷ°ՀԱՆԳԻՍՏԲԱՐԵԱՊԱՇՏԻՆ։ԱՄ·····
···· ԱՆԱԿԱՒԻՔՍ̅ՓՈԽԵՑԱՒՈՎԿԱ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՐԵԱՊԱՇՏԻՆ ԱՄՐՈՒԴԱՐԱՑ ՈՐ Կ[Է]ՍԱՒՐԵԱՑ ԺԱ-Մ[Ա]ՆԱԿԱՒ Ի ՔՍ̅ ՓՈԽԵՑԱՒ. ՈՎ ԿԱ.

Ծանոթ. Միջին մասն այժմ ջարդոտված է, լրացնում ենք ըստ Բարխուդարյանցի։ Վերջին մասը թերի է թողնված, թեև գրելու տեղ կա։

Հրատ. Ջալալեանց, II, 264։ Բարխուդարեանց, 67։

672. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է նախորդների մոտ. հարավային երեսին չորս խաչեր ու զարդաքանդակներ, իսկ երեք շրջանակներին՝ տապանագիրը. արևելյան ճակատին՝ հիշատակագրությունը՝ 7 տող.




ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՐԷՊԱՇՏ Վ[Է]Լ[Ի]ՃԱՆԱՅ, ՈՐ| ԿԷՍԱՒՐԷ Ժ|ԱՄ[Ա]ՆԱԿԱՒ Ի ՔՍ̅. ՓՈԽԵՑԱՒ ՈՎ. . . : ԵՍ ԽՈՒՄԱՐ, ՈՐԴԻ| ՋԱԼ[Ա]ԼԱՅ, ԿԱՆԳՆԵ|ՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿ|ՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ| ՈՐԴՈՅ Վ[Է]Լ[Ի]ՃԱՆԻՆ:| ՈՐՔ ԵՐԿԻՐ Պ[Ա]ԳԱՆ[Է]ՔՅԱՂ|ԱՒԹՍ ՅԻ-ՇԵՑԷՔ. Թ[Ի]Վ[Ի]Ն[Ս]. :ՋԻԷ: (1478):

Ծանոթ. Տապանագիրը թերի է թողնված, թեև ազատ տեղ կա գրելու։

Հրատ. Բարխուդարեանց, 67։ Ջալալեանց, II, 264։

673. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատին, արտաքուստ, երեսպատման մի քարի վրա փորված խաչ և շուրջը 4 տող.




ԽԱՉՍ ՄԱԽ|ՍՈՒՏ Պ[Է]Կ|ԻՆ ԱՅ:| :ՋԽ: (1491):

674. *ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի հարավային կողին, երեսով հյուսիս, 6 տող.*

ՇԻՆԵՑԱՒ ՌՃ
ԺԴ · · · · · ·
ՅԻՇԱՏԱԿԶԱՆԿ
ԱԿԱՏՈՒՆՍՍՈՒՐ
ԱՊՈՐԴՈՎԷՍ
ԵՊԿՍՆ

ՇԻՆԵՑԱՒ ։ՌՃ|ԺԴ։ (1665) ˻ԹՎ.ԻՆ˼.| ՅԻՇԱՏԱԿ ˻Է˼ ԶԱՆԿ|ԱԿԱՏՈՒՆՍ ՍՈՒՐ|ԱՊԻ ՈՐԴԻ ՈՎԱ-ՆԷՍ| ԵՊ˻ԻՍ˼Կ˻ՈՊՈ˼ՍԻՆ։

*Հրատ. Բարխուդարեանց, 66—67 (առանց թվականի)։*

675. *ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատին, արտաքուստ, պատուհանի միակտուր քարի վրա.*

ՏՐԱԾՅԻՔՍ
ԵՍՏՐԱՊԻԵՅ
ՈՐ
ԹԽԹԻՆՌ
ՃԽԳ

ՏՐ. Ա.Ծ. ՅԻ. ՔՍ.|
ԵՍ ՏՐ. . . . . |
. . . . ԹՎ.ԻՆ ։Ռ|
ՃԽԳ։ (1694)։

Ծանոթ. *Արձանագրությունը շատ բարձր տեղ է, մենք հեռադիտակով տեսել ենք այն, ինչ որ գծագրված է. Բարխուդարյանցը մեր բաց թողած տեղերում ունի* Վրդանէս Թ. *կարելի է ընթերցել նաև* Ազարիայ։

*Հրատ. Բարխուդարեանց, 67։*

676. *ՀՑՈՒՐԱՆՈՑԻ արևելյան մուտքի ճակատաքարին, 6 տող.*

ՐԵՑԻ
ԵՍՄԻԿՐՏԻՉՍԳ
ՅԻՇԱՏԱԿԷԹԱՆԱՊԻՍ
ՍՈՒՐԱՊԻՈՐԴԻՈՎԱՆԷՍԵՊԿՍԻՆ
ՇԻՆԵՑԱՒՌՃՁԴԹԻՆԱՅՆՏԱՐԻՆԷՐ
ԹԱՀՄԱԶԽՆՕՍՄԱՆԼՈՒՆԵՐԿՐԷՍՏՈՒՐՍԱՐԱՒ

ԵՍ ՄԻԿՐՏԻՉՍ Գ|ՐԵՑԻ. ՅԻՇԱՏԱԿ Է ԹԱՆԱՊԻՍ |ՍՈՒՐԱՊԻ ՈՐԴԻ ՈՎԱՆԷՍ ԵՊ˻ԻՍ˼Կ˻ՈՊՈ˼ՍԻՆ. |ՇԻՆԵՑԱՒ ։ՌՃՁԴ։ (1735) ԹՎ.ԻՆ. ԱՅՆ ՏԱՐԻՆ ԷՐ՝ ԹԱՀՄԱԶ Խ˻Ա˼Ն ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵՐԿՐԷՍ ՏՈՒՐՍ ԱՐԱՒ։

677. *ՀՑՈՒՐԱՆՈՑԻ արևելյան մուտքի հարավային կողին. 2 տող.*

ԹՎԻՆՌՃԺԵԻՆՔԻՏԱՌՈՍ
ՊԵՏՐՈՍՎՐԴԱՊԵՏ

ԹՎ.˻ԻՆ˼ ։ՌՃԺԵ։-ԻՆ (1766) ՔԻ. ՏԱ.ՌՈՍ| ՊԵՏՐՈՍ Վ.ԱՐԴԱՊԵՏ։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

678. *ԵԿԵՂԵՑՈՒ ներսում, հյուսիսային կամարի տակ կանգնած խաչքարի վրա.*

Ես Սիրաւք կանգնեցի զխաչս հաւր իմոյ Խութլափի. թվ˻ին˼ ։ՉՁԲ։ (1333)։

*Հրատ. Բարխուդարեանց, 66։*

679. *ԲԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ մեջ, Վելիճանի տապանաքարի մոտ, մի գերեզմանաքարի վրա.*

Այս է հանգիստ Խոնդքեկուն, դուստր Ախիճանին, կողակից Կոստանդէլին և Տեր Վելիճանին. յիշեցէք ի Քրիստոս յԱստուծոյ. թվին :ՋԿԱ: (1512):

*Հրատ. Բարխուդարեանց, 67։*

## 68. ՀԱԴՐՈՒԹ ԳՅՈՒՂ

***680.*** ***ԳՅՈՒՂԱՄԻՋԻ*** *մեծ եկեղեցու ներսում, որմնամույթի վրա. 1 տող.*

ԹՌՃԲ

ԹՎԻՆ :ՌՃԲ: (1653):

Ծանոթ. *Բարխուդարյանցն ունի թվ ՌՃԾ: Իսկ Ջալալեանցը՝ 1702։*

*Հրատ. Բարխուդարեանց, 68։ Ջալալեանց, II, 263։*

## 69. ԹԱՂԱՍԵՌ ԳՅՈՒՂ

*Գյուղը նոր է. հինը գտնվում մոտ 5 կիլոմետր հեռու, բարձրության վրա. այստեղ ավերակների մեջ մնում է* XVI—XVII *դարերին վերաբերող մի կիսավեր եկեղեցի, որը եղել է թաղածածկ. որա պատերի մեջ ագուցված կան մի քանի փոքր խաչքարեր. մկրտության ավազանի մոտ եղածների վրա կա երկու արձանագրություն։*

***681.*** ԽԱՉՍ ՀՌՈՒՄԻՆ

Խ ԱՉ Ս
Հ Ռ ՈՒ Մ
ԻՆ

***682.*** ԽԱՉՍ ՂԱՍՈՒՄԻՆ

Խ ԱՉՍ
Ղ Ա Ս ՈՒ
ՄԻՆ

***683.*** ***ԳՅՈՒՂԱՏԵՂՈՒՑ*** *ներքև, գետակի վրայի կամուրջի հյուսիսային ոտքի արևելյան երեսին, երկու քարերի վրա. 7 տող.*

ՅԻՇԱՏԱԿԷԳԱ
ՄՈՒԾՍՅԱՊՈՆ
ԵԿԱՆԻՈՐԴՊԱՂՏ
ԼԱՍԱՐԻՆԿՈՂԱԳԻՑՓԷՐՈՆ
ԹՎԻՆ ՌՄԺԲ ՈՒՆ

ՄԻ ԲԵՐԱՆ
ԱԾ ՈՂՈՐՄ

ՅԻՇԱՏԱԿ Է ԳԱՐ|ՄՈՒԾՍ ՅԱՊՈՆ| ԵԿԱՆԻ ՈՐԴԻ ՊԱՂՏ|ԼԱՍ|ԱՐԻՆ ԿՈՂԱԳԻՑ ՓԷՐՈ|Ի|Ն| ԹՎԻՆ :ՌՄԺԲ: ՈՒՆ (1763): |ՄԻ ԲԱՐԱՆ ԱԾ. ՈՂՈՐՄԻ |ԱՍԷՔ|:

Ծանոթ. *ՅԱՊՈՆ վերծանությունը կասկածելի է, թերևս պարոն։*

## 70. ԿԱՐՉԱԲԱՉԱՐ

*Այս գյուղը գտնվում է Հադրութից դեպի Ֆիզուլի քաղաքը տանող ճանապարհի վրա՝ Ադրբեջանի սահմանի մեջ։*

*Գյուղամիջում, այժմ էլ գործող հին ճանապարհի եզրին, գրեթե ամբողջական վիճա-*